Արձանագրություն N 2

<<ՇՄԱՀ-ՍԾ-ԲՄԱՇՁԲ-21/8>>ծածկագրով գնման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

գ.Ախուրյան <<26>> <<հուլիսի>> 2021թ.

ժամը 15:00

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամները, քարտուղարը գնման մասնակիցները և նրանց ներկայացուցիչները:

Հանձնաժողովի նախագահ Լիպարիտ Տիգրանյանը հայտարարեց նիստի բացման մասին:

1. «ՇՄԱՀ-ՍԾ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով գնման հայտերի բացման նիստը անցկացվում է ՀՀ Շիրակի մարզ,գ.Ախուրյան, Գյումրու խճուղի 42 հասցեում, Ախուրյանի համայնքապետարանի երկրորդ հարկի N11 սենյակում:գնման ընթացակարգը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն:

2. Գնման ընթացակարգին մասնակցելու համար հայտերի գրանցամատյանում գրանցվել է երեք հայտ, ըստ գնահատող հանձնաժողովի հայտեր պարունակող ծրարները կազմված և ներկայացված են սահմանված կարգին համապատասխան.

| N | Մասնակցի անունը | Մասնակցի հասցեն | Էլ.փոստ |
|---|---|---|---|
| 1. | <<Դուստր Մոնիկա>>ՍՊԸ | ՀՀ Շիրակի մարզ,գ.Ախուրյան,Գյումրու խճուղի78 | Serjbasentsyan@mail.ru |
| 2 | «Լենճանշին»ՍՊԸ | ՀՀ Շիրակի մարզ,գ.Ախուրյան,Չարենցի 6 նրբ.4 | lenchanshin@mail.ru |
| 3 | <<Մերձմոսկովյան>>ԲԲԸ | ՀՀ Շիրակի մարզ,Ախուրյան շրջկենտրոն | undermoscow@mail.ru |

3. Տվյալներ պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

«ՇՄԱՀ-ՍԾ-ԲՄԱՇՁԲ-21/8»ծածկագրով գնման ընթացակարգի համար ներկայացրած բոլոր հայտերը կազմված էին գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Ներկայացրած բոլոր փաստաթղթերը կազմված էին բնօրինակից և մեկ օրինակ պատճենից:

4.Նիստին ներկա անդամների և գնման մասնակիցների համար հանձնաժողովի նախագահ Լիպարիտ Տիգրանյանը հրապարակվեց հրավերի պահանջներին համապատասխանող մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները:

**5. Հրավերի պահանջներին համապատասխանող հայտերով ներկայացրած գնային առաջարկները `**

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Գնային առաջարկը /առանց ԱԱՀ/ | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | <<Դուստր Մոնիկա>>ՍՊԸ | 139245727 | 167094872 |
| 2 | «Լենճանշին»ՍՊԸ | 139760899 | 167713079 |
| 3 | <<Մերձմոսկովյան>>ԲԲԸ | 139165624.17 | 166998749 |

**ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՈՐՈՇԵՑ**

1. Հայտերի բացման նիստի ժամանակ մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների, քանի որ նիստին ներկա էին բոլոր մասնակիցների ներկայացուցիչները,բոլոր մասնակիցները հրաժարվեցին մասնակցել բանակցություններին:

«ՇՄԱՀ-ՄԾ-ԲՄԱՇՁԲ-21/8» ծածկագրով գնման ընթացակարգի համար ընտրված մասնակից ճանաչվեց <<Մերձմոսկովյան>>ԲԲԸ -ն-**166998749** ՀՀ դրամ/նվազեցված գին/,իսկ հաջորդաբար առաջին և երկրորդ տեղերը զբաղեցրին,համապատասխանաբար, <<Դուստր Մոնիկա>>ՍՊԸ –ն և «Լենճանշին»ՍՊԸ-ն:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց և հայտարարեց ընտրված մասնակցին , առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

Որոշումը ընդունվել է 4 կողմ, 0 դեմ, ձայներով:

3.Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝

1) հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության, հայտերի գրանցամատյանի, հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարության, ընտրված մասնակցի հայտով ներկայացրած հավելված 1-ի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակում է գնումների էլեկտրոնային տեղեկատուում: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման նպատակով համայնքի բյուջեում առկա է 100199250 /կնքվելիք պայմանագրի գնի 60%-ը/, որի մասով կողմերի միջև կկնքվի պայմանգիր,իսկ մնացած գումարի մասով,գումարի առկայության դեպքում համաձայնագրի կնքման միջոցով: Պատվիրատուի կողմից պայմանագիր կկնքվի, եթե ընտրված մասնակցի կողմից, կներկայացվեն տուժանքի ձևով որակավորման և պայմանագրի ապահովումները, իսկ համաձայնագրի կնքման ժամանակ որակավորման և պայմանագրի ապահովումները կփոխարինվեն նոր ապահովումներով՝երաշխիքով կամ կանխիկ փողով: Ապահովումները Պատվիրատուին պետք է ներկայացվի պայմանագրի կնքման մասին ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Որոշումը ընդունվել է 4 կողմ, 0 դեմ, ձայներով:

3. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները,ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝ Լիպարիտ Տիգրանյան

անդամներ՝ Ռուբիկ Քաբաբյան

Վաղինակ Հովսեփյան

Վարդկես Մելքոնյան

քարտուղար՝ Անահիտ Յավրումյան